

Կանոնադրություն

«Կրթություն» շաբաթաթերթի խմբագրության

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1 «Կրթություն» շաբաթաթերթի խմբագրության հիմնադիրն է «Կրթություն» թերթի խմբագրություն ՊՓԲԸ-ն:
- 1.2 «Կրթություն» շաբաթաթերթի խմբագրությունն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվելուց հետո:
- 1.3 Խմբագրությունն իր շաբաթաթերթը թողարկում է շաբաթը մեկ անգամ պարբերականությամբ, երկու տպագրական մամուլ ծավալով՝ հայերեն, առանձին նյութեր ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ գերմաներեն լեզուներով:
- 1.4 Շաբաթաթերթը թողարկվելու է Երեւանում:
- 1.5 Շաբաթաթերթի հրատարակիչն է թերթի աշխատանքային կոլեկտիվը:
- 1.6 Շաբաթաթերթը՝
- կծեւավորի հանրակրթության, բարձրագույն կրթության տեղեկատվության համակարգը.
 - կապահովի կրթության բարեփոխման գործընթացի խնդիրների լուսաբանումը եւ պրոպագանդումը.
 - կրթության եւ գիտության համակարգի կառավարման մարմինների եւ աշխատողների համար կապահովի անհրաժեշտ լրատվություն.
 - մեծապես կաջակցի կրթության նոր ծրագրերի ներդրման գործին, այդ ուղղությամբ կապահովի լայն իրազեկություն.
 - կտպագրի կրթության ոլորտին առնչվող կարեւոր հրամաններն ու որոշումները.
 - կապահովի կրթության համակարգի գործունեության վերաբերյալ լուրերի հավաքումը եւ դրանք կտրամադրի հանրապետական եւ միջազգային լրատվության միջոցներին:
- 1.7 Խմբագրության հասցեն՝ Երեւան, Տիգրան Մեծի 67, հեռ. 57-49-56:
- 1.8 Խմբագրության հասցեն կամ հեռախոսահամարը փոխելու դեպքում խմբագրությունը պարտավորվում է այդ մասին 5 օրվա ընթացքում տեղյակ պահել ՀՀ արդարադատության նախարարությանը:

2. Խմբագրության նպատակն ու խնդիրները

2.1 Շաբաթաթերթը մանկավարժական, կրթական, գիտական, մշակութային, մեթոդական պարբերական է:

2.2 Ընթերցողների նամակներ հրապարակելիս խմբագրությունը կկատարի խմբագրական այնպիսի կրճատումներ, որոնք չեն աղավաղի նամակների բովանդակությունը:

2.3 Իր գործունեությամբ խմբագրությունն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, հավասարության, հարգանքի, խղճի ազատության սկզբունքներով եւ համամարդկային այլ արժեքներով՝ օժանդակելով հրապարակայնությանն ու ժողովրդավարությանը, մտքի, խոսքի բազմակարծության ազատությանը:

2.4 Խմբագրությունը «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի համաձայն.

ա. կարող է լուրեր հավաքել եւ հաղորդել միջազգային մամուլի եւ զանգվածային լրատվության միջոցներին, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի հակասում մամուլի մասին օրենքի 6-րդ հոդվածի պահանջներին,

բ. խմբագրության նյութերը գրաքննության ենթակա չեն,

գ. խմբագրությունը հոգ է տանելու մայրենի լեզվի անաղարտության համար,

դ. խմբագրությունը նախնական համաձայնությամբ կարող է իր լրագրողին հավատարմագրել պետական եւ հասարակական կազմակերպություններում՝ մասնակցելու եւ լուսաբանելու դրանց աշխատանքները,

ե. օրենքով սահմանված կարգով կարող է համաձայնագրեր կնքել օտարերկրյա լրատվական կազմակերպությունների եւ քաղաքացիների հետ,

զ. խմբագրությունը պատասխանատվությունը չի կրում այն տեղեկությունների հրապարակման համար, որոնք ստացվել են զանգվածային լրատվության այլ միջոցներից կամ պետական ու հասարակական մարմինների լրատվական ծառայություններից:

3. Խմբագրության կազմակերպչական կառուցվածքը եւ կառավարումը

3.1 Խմբագրության աշխատանքները ղեկավարում է հիմնադիրը կամ նրա կողմից նշանակված գլխավոր խմբագիրը, որն իրականացնում է հիմնադրի ծրագրերը (սկզբունքային նշանակության) մասնագիտական ինքնուրույնության հիման վրա: Գլխավոր խմբագիրն ունի տեղակալ եւ պատասխանատու քարտուղար, որոնք նույնպես հրամանագրվում են հիմնադրի կողմից: Գլխավոր խմբագրի գործուղման, հիվանդության կամ այլ պատճառներով բացակայության դեպքերում խմբագրության գործունեության իրականացման պատասխանատվությունը դրվում է գլխավոր խմբագրի տեղակալի վրա:

3.2 Խմբագրության գլխավոր խմբագիրը, հիմնադրի համաձայնությամբ, իրավունք ունի՝

ա. հանդես գալ խմբագրության անունից պետական իշխանության, կառավարման եւ դատական մարմիններում,

բ. լրագրողի համաձայնությամբ խմբագրել նրա կողմից ներկայացված նյութերն ու տեղեկությունները,

գ. հրավիրել խմբագրական խորհուրդ եւ նախագահել խորհրդի նիստերում:

3.4 Խմբագրության գլխավոր խմբագիրը պարտավոր է՝

ա. հսկողություն սահմանել խմբագրության ողջ գործունեության վրա՝ ելնելով այն խնդիրներից, որոնք առաջադրված են հիմնադրի կողմից եւ սույն կանոնադրությամբ,

բ. ղեկավարել խմբագրության աշխատողների աշխատանքային գործունեությունը, երաշխավորել խմբագրության նյութերի հավաստիությունը,

գ. չթողարկել պետական գաղտնիք պարունակող նյութերի, տեղեկությունների հրատարակումը,

դ. չթույլատրել պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, թմրամոլություն ու քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող լրատվություն,

ե. անհրաժեշտության դեպքում տալ հերքում կամ շահագրգիռ քաղաքացիներին ու կազմակերպություններին թույլատրել հանդես գալ պատասխանով,

զ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել թողարկված լրատվությունը լուրերի, տեղեկությունների հրապարակման օրվանից մեկ տարի ժամկետով, իսկ

երկարատեւ կամ մշտական պահպանության ժամկետները՝ ըստ ՀՀ կառավարության սահմանած կարգի:

3.5 Խմբագրությունն ունի խմբագրական խորհուրդ, որը խորհրդակցական մարմին է եւ օգնում է իրականացնել շաբաթաթերթի ստեղծագործական ծրագրերը: Ի պաշտոնե խմբագրական խորհրդի նախագահը գլխավոր խմբագիրն է:

3.6 Խմբագրական խորհուրդ կարող են ներգրավվել խմբագրությունում չաշխատող նաեւ այլ քաղաքացիներ, ովքեր օգտակար կլինեն խմբագրության համար:

3.7 Խմբագրական խորհրդի կազմը հիմնադրի հաստատմանն է ներկայացնում գլխավոր խմբագիրը:

3.8 Խմբագրական խորհրդի որոշումն ընդունվում է, եթե քննարկվող հարցին կողմ է քվեարկում նրա անդամների երկու երրորդը: Խմբագրական խորհուրդը կարող է գլխավոր խմբագիրն իրավունք տալ լուծել առանձին հարցեր, որոնք վերաբերում են խմբագրական խորհրդի իրավասությանը:

4. Հիմնադրի իրավունքներն ու պարտականությունները

4.1 Շաբաթաթերթի գործունեությունն ապահովելու նպատակով հիմնադիրը խմբագրությանն ապահովում է աշխատապայմաններով, գույքով, թղթով, տեխնիկայով, այլ միջոցներով:

4.2 Կարող է կասեցնել կամ դադարեցնել (ինչպես նաեւ՝ լուծարել) խմբագրության գործունեությունը՝ անհրաժեշտության կամ սույն կանոնադրական պահանջները խախտելու դեպքում:

4.3 Հիմնադիրը՝

ա. կազմավորում է շաբաթաթերթի խմբագրական խորհուրդը,

բ. որոշում է շաբաթաթերթի գործունեության հիմնական ուղղությունները, թեմաները,

գ. իրականացնում է խորհրդատվական գործունեություն:

5. Լրագրողի, աշխատակիցների իրավունքները եւ պարտականությունները

5.1 Լրագրողը խմբագրության հետ աշխատանքային պայմանագիր կնքած կամ խմբագրության կողմից լիազորված այն անձն է, ով իր իրավասություններին համապատասխան հավաքում, պատրաստում կամ խմբագրում է նյութեր:

Լրագրողական կոլեկտիվը բաղկացած է ստեղծագործական աշխատողներից:

5.2 Լրագրողական կոլեկտիվը ընդունում է խմբագրության կանոնադրությունը:

- Իր իրավասության մեջ մտնող բոլոր հարցերը լրագրողական կոլեկտիվը որոշում է լրագրողների ընդհանուր ժողովում:

5.3 Լրագրողն իրավունք ունի՝

ա. խմբագրության հետ կնքել աշխատանքային պայմանագիր եւ լիազորվել խմբագրության կողմից,

բ. հավաքել եւ հրապարակել լուրեր եւ տեղեկություններ,

գ. հրաժարվել նյութ պատրաստելուց, եթե այն հակասում է իր համոզմունքներին,

դ. չստորագրել իր գրած հոդվածը կամ պատրաստի նյութը, որի բովանդակությունը աղավաղված է խմբագրի կամ խմբագրության կողմից,

ե. լրագրողի վկայականով ներկա լինել հանրահավաքներին, ցույցերին եւ այլ միջոցառումներին, դատավարություններին եւ գտնվել տարերային աղետների վայրում՝ օրենքով սահմանված կարգով,

զ. ձայնագրել եւ արձանագրել այլ միջոցներով, եթե արգելված չէ գործող օրենսդրությամբ,

է. ունենալ ծածկանուն:

5.4 Լրագրողը պարտավոր է՝

ա. ղեկավարվել գործող օրենսդրությամբ, խմբագրության կանոնադրությամբ եւ ծրագրով,

բ. տալ ստուգված, հավաստի լուրեր,

գ. անհրաժեշտության դեպքում նշել տեղեկատուին կամ աղբյուրը, եթե լուրը հրապարակվում է առաջին անգամ,

դ. խմբագրին տեղյակ պահել չստուգված փաստերի եւ այն տեղեկությունների մասին, որոնց հրապարակումը կարող է խախտել գործող կանոնադրության եւ մամուլի մասին օրենքի 6-րդ հոդվածի պահանջները:

6 Խմբագրության ֆինանսական միջոցների գոյացման եւ օգտագործման կարգը

6.1 Ֆինանսական միջոցները գոյանում են՝

- հիմնադրի կատարած մասնահանումներից,
- շաբաթաթերթի եւ նրա հավելվածների, ինչպես հատավաճառից, այնպես էլ բաժանորդագրությունից,
- գովազդների, հայտարարությունների թողարկումից գոյացած միջոցներից,
- ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից տրվող նվիրատվություններից եւ փոխառություններից,
- ՀՀ օրենսդրությանը չհակասող արտադրատնտեսական գործունեությունից առաջացած միջոցների հաշվին:

6.2 Խմբագրության ֆինանսական միջոցները ծախսվում են՝

- տեխնիկայի եւ սոցիալական զարգացման ֆոնդի,
- նյութական խրախուսման, տեխնիկական միջոցների նորոգման,
- հիմնական եւ ոչ հիմնական գույքի ձեռքբերման,
- հոնորարային, գործուղման, տրանսպորտային եւ այլ ծախսերի նպատակահարմարությունից, ըստ հաստատված եռամսյակային, կիսամյակային, տարեկան նախահաշվի:

6.3 Բյուջետային տարվա վերջում գումարային մնացորդներն ամբողջովին, անմիջականորեն անցնում են հօգուտ տարվա եկամուտների:

6.4 Խմբագրությունը իր շաբաթաթերթի տպագրությունը իրականացնում է տպարանի հետ նրա կնքած պատվերների հիման վրա:

Պատվերը վավերացնող պայմանագրում արտահայտվում են տպագրության ծախսերը, կատարման ժամկետը, պարբերականության պահպանումը:

6.5 Խմբագրության ֆինանսական գործունեության համալիր ստուգում կարող է իրականացվել պետական իրավասու մարմինների կողմից՝ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Խմբագրության միջոցները եւ սեփականությունը

7.1 Խմբագրությունը իրավաբանական անձ չէ, չունի առանձին հաշվեհամար, կնիք, դրոշմակնիք եւ իրավաբանական անձին անհրաժեշտ այլ ռեկվիզիտներ եւ գործում է որպես հիմնադիր ենթաբաժին:

7.2 Խմբագրության հիմնադրի, խմբագրի եւ խմբագրական խորհրդի տնտեսական, գույքային եւ դրամական հարաբերությունները կարգավորվում են նրանց միջեւ կնքած պայմանագրով, որը չի հակասում գործող օրենսդրությանը:

8. Կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաեւ վերագրանցում իրականացնելու կարգը

8.1 Խմբագրության կանոնադրությունն ընդունվել է խմբագրության ընդհանուր ժողովում, լրագրողների ձայների մեծամասնությամբ եւ հաստատվել հիմնադրի կողմից:

8.2 Խմբագրության կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ, ինչպես նաեւ վերագրանցումը կատարվում է ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցվելուց հետո:

8.3 Խմբագրության աշխատանքում գլխավոր խմբագիրը ղեկավարվում է սույն կանոնադրությամբ:

Այն կարգավորվում է հիմնադրի, գլխավոր խմբագրի, խմբագրության եւ խմբագրական խորհրդի հարաբերությունները, որը չի հակասում ՀՀ օրենսդրությանը:

9. Խմբագրության գործունեության կասեցումը կամ դադարեցումը

9.1 Խմբագրության գործունեության կասեցումը կամ դադարեցումը կարող է իրականացվել հիմնադրի որոշմամբ, եթե իր գործունեությամբ խմբագրությունը չի ապահովում կանոնադրական պահանջները: Ինչպես նաեւ՝

ա. դատարանի որոշմամբ կարող է կասեցվել երեք ամիս ժամկետով,

բ. դատարանի որոշմամբ կարող է դադարեցվել 6 ամիս ժամկետով, եթե դատարանի կողմից կասեցումից հետո թույլ է տրվել ՀՀ գործող օրենսդրության պահանջների նոր խախտում:

9.2 Խմբագրության գործունեության կասեցման կամ դադարեցման, ինչպես նաև լուծարման դեպքերում անհրաժեշտ միջոցներն ու գույքը մնում են հիմնադրին:

9.3 Խմբագրության լուծարումը, պարտքերը մարելուց եւ այլ պարտավորությունները կատարելուց հետո, որոշմամբ հաստատվում է լուծարային հանձնաժողովի կողմից:

9.4 Պետական գրանցման պահից խմբագրության կանոնադրությունը կլինի խմբագրությունում, բանկում եւ գրանցվող մարմնում:

9.5 Խմբագրությունը, «Մամուլի եւ զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի պահանջի համաձայն, տպագիր օրինակներից անվճար ուղարկում է ՀՀ Ազգային գրադարան, գրապալատ եւ վկայագիր տված մարմին՝ ՀՀ արդարադատության նախարարություն: